տալիս են արգանակ կամ կաթ հացով։ Գրեթէ նոյնն է և Բերլինում։ այստեղ տալիս են մի կտոր ապխտած հաց և կամ մի կտոր սև հաց խոզի ճարպով կամ կարագով, յետոյ սուրճ, կաթ կամ արգանակ՝ հաճարի ալիւրով—5—7 կոպէկով։ Աղքատ երեխաների թիւն այնքան շատ է, որ ընկերութիւնք զօրօրինակ՝ Պարիզում ծախսում են մօտ 500·000 ֆրանկ (շուրջ 200·000 րուբլի)։ Այդ ծագում է կերակուրի յատկութիւնից, վասն զի վճարով շատ են և վճարում են միայն 5 կոպէկ, իսկ աղքատների ճաշը չեն ուզում խառնել վճարողների ճաշից։ Վիէնում ընկերութիւնները գոյացում են 35·000 ֆր., Վ.են-նան 1889—90 թ. ձմեռը 10·000 գուլդեն. (6·000 րուբլի)։ Բերլինը 1891—92 թ. 10·600 մարկ (մօտ 5·000 ռ.) պակասորդը ծածկելու համար։ Մի քանի տեղեր միայն կէս փայն են տալիս, իսկ ձրի՝—միայն ձմեռը, երբ շատ ընտանիքներ չեն կարենում աշխատանք անել։

Ուսումնարանական ճաշերը շատ օգտակար հետևանքներ ունեն. երեխայոց առողջութիւնը լաւանում է, ուսումնարան յաճախելը կանոնաւորւում է և երեխայք պարապում են աւելի ջանասիրութեամբ։ Մինչև անգամ համալսարաններից շատերում հաստատուած է ճաշ չքաւոր ուսանողների համար։ Այս բոլոր քաջալեր պէտք է լինին՝ սկսած գործը շարունակելու և որտեղ չէ սկսուած՝ ձեռնարկելու։ Հայոց մէջ աւելի պէտք է այս լաւ գործի վրայ ուշադրութիւն դարձնէ Ներսիսեան Հոգ. դպրանոցի հոգաբարձութիւնն, որ մեծամեծ միջոցներ ունի բարենպատակ անորինութիւնների համար։ Ցանկալի չէ, որ չքաւոր աշակերտները կերակրուին զանազան ընտանիքներում։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1183, որով հաստատէ զԳրիգորն Լեգէրեան և զԳաբրիէլն Աղաղանեան ի հոգաբարձուս երկսեռ դպրոցաց Վաղարշապատու, որպէս և զանձնափոխանորդս սոցա զՄկրտիչն Արելեան և զԳէորգն Լուսարարեան, 27 յուլիսի.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1221, յանուն փոխանորդի վիճակին Ալէքսանդրապօլու Աշոտ վարդապետի, որով թոյլատրէ բանալ դպրոցս—ընթերցարան ի պէտս քահանայից, ըստ խնդրանաց Նորին Արժանապատուութեան, 3 օգոստոսի.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1226, որով հաստատէ ի հոգաբարձուս Մեսրոպեան ուսումնարանին Բաղու քաղաքի զբըժիշկ Շմաւոնն Ագամիրեան և զբժիշկ Միքայէլն Ջաշեան և զանձնափոխանորդս սոցա զԳասպարն Տէր Մարգարեան և զԱստուածատուրն Կաճկաճեան, 4 օգոստոսի.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1227, որով հաստատէ ի հոգաբարձուս Հռիփսիմեան ուսումնարանին Բաղուայ զԱրսէնն Կրասիլնիկեան և զՆերսէսն Արելեան և զանձնափոխանորդս սոցա զԱստուածատուրն Վաչէեան և զՆերսէսն Պաւթեան, 4 օգոստոսի.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1228, որով հաստատէ ի հոգաբարձուս միջանեան օրիորդաց պատրաստական դպրոցին Բաղուայ զԳրիգորն Քալանթարեան և զԱղէքսանդրն Նազարեան (անձնափոխանորդ), 4 օգոստոսի.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1230, որով հաստատէ ի հոգաբարձուս Ներսիսեան ազգային դպրանոցին Տփխեաց զՅովհաննէսն Ալիխանեան, զՄիքայէլն Թամամշեան, զՅովհաննէսն Պաղնդիարեան, զՊօղոսն Մելիք Ղարագեօզեան, զԿարապետն Քօջաբեան, զՍամփսոնն Յարութիւնեան, զՅակոբն Թադէոսեան, զՍամուէլն Բաբեղեան, զԱղէքսանդրն Մելիք Ազարեան, զՍահակն Բուղդանեան, զՅովհաննէսն Լօրիս Մելիքեան և զԱղէքսանդրն Քալանթարեան, որպէս և զանձնափոխանորդսն սոցա՝ զԵփրեմն Աղամալեան, զԼեւոնն Եղիազարեանն, զՆազարէթն Տիգրանեան և զՅովսէփն Ամիրխանեան։ 4 օգոստ.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1233, յանուն Նահապետ վարդապետի Նահապետեան, որում պատուիրէ փութով գալ ի Ս. Էջմիածին, յանձնելով ժամանակաւորապէս Բագարատ վարդապետի Թաւաքալեան զփոխանորդութիւնն վիճակին Կարուց։ 4 օգոստ.

* *
*

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի համարաւ 1272 յանուն Փրիդոնեանց եղբարց Մնացականայ և Գրիգորի, վասն ստացման միոյ տամի 9000 բուբ. ըստ կտակի հանգուցեալ հօր նոցա բարեյիշատակ Գէորգայ Փրիդոնեան, տոկոսեօք որոյ ունի ուսանիլ սան մի, ըստ որոշման Վեհափառ Կաթուղիկոսի՝ ի բարձրագոյն դպրոցս Պետութեան։ 9 օգոստ.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1319 առ Սինօդն Ս. Էջմիածնի, որով պատուիրէ անօրինել զի գումարք եկեղեցւոյն Վաղարշապատու իբր երեք հազար բուրլիք ծախեսցին ի շինութիւն դպրոցաց տեղւոյն։ 13 օգոստոսի.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1330, որով հաստատէ ի հոգաբարձուս երկսեռ դպրոցաց Ախալցխայի զՅովհաննէսն Զաթարաշեան և զԱղէքսանդրն Այվազեան, որպէս և զանձնափոխանորդսն սոցա՝ զՏրդատն Յակոբջանեան և զԱղէքսանդրն Թամբալեան։ 16 օգոստոսի.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1361 յանուն վանահօր Ս. Թովմայի առաքելոյ վանուց՝ Գեր. Գրիգոր եպիսկոպոսի Աղաֆիրեան, զոր կարգէ նախագահ հոգաբարձութեան դպրոցաց մերոց Ագուլեաց, ըստ խնդրանաց ժողովրդեան։ 17 օգոստոսի

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1404 յանուն Արրահամու Բաբանեան, որով օրհնէ զնա ի սատարելն տպագրութեան նշանաւոր երկասիրութեանց Աղէքսանդրի Երիցեան որ ի Տփխիս։ 25 օգոստոսի.

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1409 յանուն Նահապետ վարդապետի Նահապետեան, որում շնորհէ լանջախաչ ականակուռ, ի նշան գոհունակութեան։ 26 օգոստ.

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1425 յանուն հոգաբարձութեան թեմական դպրանոցին Շուշի քաղաքին, որով հրամայէ տեսչին և երկուց հոգաբարձուաց գնալ ի Շուշի և սկսանել զընթացս ուսման ի դպրանոցին, քանզի զվախճանականն անօրէնութիւն վասն խնդրոյն ունի առնել ի քաղաքին անդ։ 26 օգոստոսի.

* *
*

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի համարաւ 1466 յանուն Մաղաքիա վարդապետի՝ Հովուին Հայոց Ամերիկայի և համայն-Հայ գաղթականաց տեղւոյն, որով յայտնէ զգոհունակութիւն իւր սակս նուիրաբերութեան նոցա հազար հինգ հարիւր ռուբլեաց բուրլեաց ի նպաստ սովելոց։ Ընդ սմին և ասէ.

«Հայրաբար պատուիրեմ այսու զի պինդ կալջիք զպատուական աւանդութիւնս Հարցն Սրբոց և զկրօն ամենամաքուր Առաքելական Ս. Եկեղեցւոյս Հայաստանեայց. ուստի՝ զի՞ ուրոց Ձերոց զմայրենի լեզու մեր Հայկական, որով զարդիս մատուցանեմք գոհութիւնս և

պաղատանս ի Տան Տեառն Արարչի մերոյ: Եւ-քանզի հեռի և անջատ լինելն ի Հայրենեաց դառնացուցանէ զպանդխտութիւնն, յամենայն սրտէ աղօթեմք, զի անփորձ և անսասան մը-նացեալ ի պանդխտութեանն, յաջողութեամբ վերադարձ առնիցէք ի ցանկալի Հայրենիս, ու-րանօր միայն կարէք վայելել զլիուլի երջան-կութիւն »: 31 օգոստոսի·

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1497, որով հաստատէ ի հոգաբարձուս երկ-դասեան դպրոցին Գօրիսու զԳալուստ Մի-րումեան և զՀայրապետեան Մելքոնեան, որպէս և զանձնափոխանորդսն սոցա՝ զԱստուածա-տուրն Եօլեան և զՂազարն Մալեան: 1 սեպտեմբերի·

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1506 յանուն Մեսրոպ քահանայի Գէօնջեան, Թեմական տեսչի Երևանայ, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Փոխ-թեմակալին Երևանայ Բարձր· Կիւրեղ վարդապետի Արապեան: 2 օ-գոստոսի·

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1507 յանուն Գրիգոր քահանայի Տէր Աւա-գեան՝ որ յԷրտափին (Վայոց ձոր), որով շնոր-հէ նմա իրաւունս կրել խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Բարձր· Փոխ-թեմակալին Ե-րևանայ: 2 օգոստոսի·

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1508 յանուն Թադէոս քահանայի Տէր Աբրա-համեան՝ որ ի Նոր Բայազէդ, որով շնորհէ նը-մա իրաւունս կրել խաչ ոսկեզօծ, ըստ միջ-նորդութեան Բարձր· Կիւրեղ վարդապետի: 2 օգոստոսի·

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1509 յանուն Յակոբ քահանայի Կիրակոսեան, Անդամոյ Հոգևոր Կառավարութեան Կարուց, որով շնորհէ նմա իրաւունս կրել խաչ ոսկե-զօծ, ըստ վկայութեան Արժ· Նահապետ վարդապետի և ըստ միջնորդութեան Բարձր· Կիւրեղ վարդապետի: 2 օգոստոսի·

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1515 յանուն Սահակայ Աբրահամեան Մելիք Ստեփանեան որ ի Հին Ջուղա, որով օրհնէ զնա սակս բարի ցանկութեանն՝ ի վերանորո-գել զխախտեալ տանիս հնադարեան վանուց Ս· Ստեփաննոսի Նախավկային՝ որ ի Դարա-շամբ: 3 սեպտեմբ·

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1526, որով հաստատէ ի հոգաբարձուս երկ-սեռ դպրոցաց Իգդիրի, զԱրշակն Աւետիսեան և զԱւետիսն Սուսանեան, որպէս և զանձնա-փոխանորդսն սոցա՝ զՅակոբն Հայրապետեան և զՏիգրանն Աւագեան: 3 սեպտեմբ·

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1527, որով հաստատէ ի հոգաբարձուս Նորա-բաց դպրոցին Կարբի գեղջ զԱւետիսն Մել-քոնեան և զանձնափոխանորդ սորա՝ զՍարգիսն Պարսամեան և կարգէ պատուաւոր հոգաբար-ձու զհիմնադիրն դպրոցին՝ զՏիգրանն Ափրի-կեան որ յԵրևան: 3 սեպտեմբ·

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1528, յանուն Գեր· Կարապետ եպիսկոպոսի, առաջնորդին Արցախու, որով պատուիրէ վե-րադառնալ ի Շուշի և արթուն հսկողութեամբ ջան գործել՝ ի պահել զդպրանոցն յամենայն զայթակղութենէ՝ որ եթէ գայցէ վերստին, «հատանել զձեռն զայթակղութեան» ըստ խրատու առաջնորդական իրաւանց յետ վե-րահասութեամբ զատելոյ· այլ և յայտնէ թէ ի պատճառս ցրտաբեր աշնան և բազմապատիկ զբաղմանց յետաձգէ զայցելութիւն իւր ի քա-ղաքին Շուշի: 4 սեպտեմբ·

* *
*

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1535 յանուն Պետրոս քահանայի Տէր Յով-հաննիսեան՝ Թեմական տեսչին Արցախու, ո-րով շնորհէ նմա իրաւունս կրել խաչ ոսկեզօծ,

ըստ միջնորդութեան Գեր. Առաջնորդի վիճակին: 5 սեպտեմբ.

* * *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1536՝ յանուն Կարապետ քահանայի Տէր Դանիէլեան, անդամոյ Կոնսիստորիային Արցախու, որով շնորհէ նմա իրաւունս կրել խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Գեր. Առաջնորդի վիճակին: 5 սեպտ.

* * *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1541 յանուն Արսէն վարդապետի Գլոձեան, որով կարգէ զնա ի պաշտօն յաջորդութեան վիճակին Հին Նախիջևանի, ի տեղի Գրիգորիս վարդապետի Տէր Յակոբեան: 5 սեպտեմբ.

* * *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1552 յանուն Գրիգոր քահանայի Գրիգորեան ի Բաքու, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի գլուխն զգլխարկն թաւշեայ «կամիլաւկա» անուանեալ, ըստ միջնորդութեան Առաջնորդին Շամախւոյ Գեր. Մեսրոպ Արքեպիսկոպոսի: 6 սեպտեմբ.

* * *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1553՝ յանուն Ցաճատ քահանայի Մարաղեան ի Շամախի, որով շնորհէ նմա իրաւունս կրել խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Գեր. Առաջնորդին: 6 սեպտեմբ.

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարու 1554՝ յանուն Արսէն քահանայի Բաղրատունեայ ի Շամախի, որով շնորհէ նմա իրաւունս կրել խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Գեր. Առաջնորդին: 6 սեպտեմբ.

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ

Օգոստ. 19. Սինոդը պատուիրեց Կարսի Հոգևոր Կառավարութեան, որ եթէ Կաղզուանցի Յովհաննէս քահանայ Թովմասեանցը չի կամենում լսել Բարձրագոյն Հոգևոր Իշխանութեան հրամանը, որ վճռել է ապաշխարեցնել նորան երեք ամիս Կարուց գաւառի վանքերից մինում իւր անխաղաղասէր բնաւորութեան համար, այն ժամանակ ուղարկել յիշեալ քահանային Խորվիրապի վանքը:

—

Օգոստ. 22. Սինոդը անցեալ տարի դեկտեմբերի 8-ին վճռել էր լուծել Դամարլեցի Ղազար Պօղոսեանի պսակը նորա կին Խանումի անընդունակութեան պատճառաւ այն պայմանով, որ մարդը ապահովէ լքեալ կնոջ ապրուստը: Բայց Կոնսիստորիան յայտնեց թէ Ղազար Պօղոսեանը չէ կամենում բաւականութիւն տալ կնոջը, ուստի Սինոդը վերստին հրամայեց. թէ մինչև Ղազար Պօղոսեանը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրամանի մտքի համաձայն չապահովէ իւր կին Խանումի ապրուստը, անհնար է նորան իրաւունք տալ ուրիշ կնոջ հետ նորից ամուսնանալու:

—

Օգոստ. 22. Տփխիսի Կոնսիստորիային յայտնեց թէ Շաղշակ գիւղի բնակիչ Մաթուկ Թերզեանցը հրաւիրուած էր Յովակիմ Փահլէվանեանցի հարսանիքը. այդ ժամանակ փեսայացու Յովակիմը թողնում է հարսանեաց հանդէսը և հեռանում: Հարսնացու Մարիամ Զաքրեանի բարեկամները և ծնողները պսակել են տալիս նրան վերոգրեալ Մաթուկ Թերզեանցի հետ Գրիգոր քահանայ Տէր Աւետիքեանցի ձեռքով: Վեց ամիս անցնելուց յետոյ առաջին փեսայացու Փահլէվանեանցը գալով գաղտնի փախցնում է իւր նշանած Մարիամին և տանում Զիրուխլու գիւղը և այն տեղ նորա հետ պսակւում է Միքայէլ քահանայ Թահմազեանի ձեռքով: Սինոդը հրամայեց. անվաւեր համարել Մարիամ Զաքրեանի երկրորդ պսակը Յովսէփ Փահլէվանեանցի հետ. իսկ Միքայէլ քահանային և կրկնապսակ Մարիամ Զաքրեանին և Յովակիմ Փահլէվանեանին յանձնել քաղաքական դատաստանի:

—

Օգոստ: 26. Ղարաբաղի Կոնսիստորիային յայտնում է թէ Գտչոյ վանքի վանահայր Առաքել արեղան ինքնագլուխ պսակել է Ծակուեցի Առաքել Տէր Բաղդասարեանին Շուշեցի